26. ՄԻՐԶԱ ՄԱՀՄՈՒԴ

Ժամանակին կէղնի փաշեմ՝, ըդ փաշեն կմեռնի, ուր տղեն կդնին փաշա ուր տեխ։ Էրկու իրեք ամիս էդի փաշութեն գընե, վերչեն էնոր մեր ճիժ մի կրերե ու ճժրերքեն կմեռնի։

Ըդ փաշի կին զտղան կուտա ուրիշին պահելու, զանուն ալ կդնե Միրզա Մահմուդ, ամա ուր էրկան բան չասեր։ Մեկ տաս տարիմ՝ ադպես կշարունակե զուր փաշութեն ըդ մարդ։

Միրզա Մահմուդ օր կէղնի մինչև տաս տարեկան, ամեն օր կիգա տուն ու կէրթա։ Ըդ փաշի կնկան մեր կկանչե, չի դինար, թե փաշեն ուրին ախպերն է։ Օրմ՝ ալ կիրակի օր փաշեն հյուքմաթ չէրթար, գիկա նստի տան շեմքի վրան, տրտում, տխուր կմտածե։

Միրզա Մահմուդ կառնե ինը ձիավոր, ինքն ալ վրան տաս, կէլլա փաշի տան դիմաց քիչ մի հեռուն ճըրինդ կխաղա։

Փաշի կնիկ փաշին կասե.—Ինչո՞ւ կմտածես։

Փաշեն կասի.—Իդա խղար հարստութեն կա ընձի, նա՛ ախպեր կա ընձի, նա՛ տղամ՝ կա ընձի, ժառանգ չունիմ, բան չունիմ, ըդոր հ՝ապով կմտածիմ։

Փաշեն կըսե.—Թե օր աստծու շարիեթով քզի ախպերըմ ցուց տամ, ի՞նչ կանես։

Կըսե.—Թե էդավա բամ՝ էղնի, դրհա աղեկ։

Կրսե.—Հա՛, էնա առչի սև ձիավոր քու ախպերն։ ա-

Կրսե.—Ինչպե՞ս։

Կրսե.—Հիմա օր ճրրինդ խաղցան փրցան, կիգա կիշնա մըր տուն։

Կիգա ու ճիշտ կիշնա տուն։

Ախպեր կէրթա Միրզա Մահմուդի առեշ։ Կրոնե ըզձեռ ու զէրեսներ կպագնե։

Կասե.—Դու իմ ախպերն իս։

Կրսե.—Չիմ գինա, ես քու ախպերն իմ, թե չէ, բայց իդա կնիկ իմ մերն է։

Կրսե.—Չէ՛, էդի քու մերն չի, էդի իմ կնիկն է, քու մեր մեռե։

Ըդտեխ էդա կնիկ կհավատացու տղին, թե ինք փաշի ախպերն է։

Իրեք օր կուտին, կխմին իրարու հետ։

Փաշեն կրսե.—Ախպե՛ր, պըտի դու ձիաներու վրեն մուխյաթ մնաս, ես ալ կէրթամ հուքմաթ։

Մեկ տաս տրսնըհինգ օր Միրզա Մահմուդ ձիաներու վրեն մշկութեն կընե, սորա ուրին ընկերնին, դրկեցնին կմեղդրին ուրին։

Կրսին թե.—Ամո՞թ չէ, դու փաշի ախպերն էղնիս, դու մշկութեն էնիս։

Միրզա Մահմուդ կտեսնա օր ընկերներու խոսք շիտակ է։

Կրսե.—Իմ ախպեր զի ախպերութէն չէնե։

Կէլլա կհեծնա ձիմ՝ ու կէրթա։

Կէրթա մեկ սարում՝ պրակի մեշ կմտնա։ Անտեղ գիշեր կրակ կվառե։ Ուր դիմացն էլ բազրկանըմ կթափի ըդտեխ։ Կտեսնա Միրզա Մահմուդի կրակը, թուշարն կէլլա մշակ կճամփե։

Կրսե.—Գացե՛ք, իշեք, էդիկ ո՞րն է, ո՞ր չէ, ասեք՝ արի, մեր աղեն կանչե զքզի։

Մշկներ կէրթան կասին, թե՝ մըր աղեն կկանչե քզի, կրսե.—Արի՛ մեր խեչ։

Միրզա Մահմուդ կրսե.—Չըմ իգա։

Կդառնան իգան աղի խեչ, կրսեն.—Ի՞նչ էրեցինք, չէկավ։

— Հըմալ է,—կրսե թուշար,—առեք ձի մի տարեք ուրին, ասեք՝ մըր աղեն մախսուս ուշա կընե ուրնե, թըղ էլնա, ձին հեծնա իգա։

Միրզա Մահմուդ կհեծնա զձին, կէլլա կիգա աղի խեչ։

Թուշար Միրզա Մահմուդին կհարցու.—Քու անուն ի՞նչ է։

Կրսե.—Իմ անուն Միրզա Մահմուդ է։

Կրսե.—Բամ՝ ըսիմ չէղնի՞։

Կրսե.—Ապա ասա։

Կրսե.—Ես տղա չունիմ, բամ՝ չունիմ, էկո՛ւ, էղի՛ ընձի տղա։ Ես լէ էտավա հարուստ իմ։ Ընձի աղջիկ մի կա ու կնիկըմ։

Միրզա Մահմուդ կրսե.—Շա՛տ աղեկ, ինչո՞ւ չէ։

Ձիաներու միջեն ձիմ՝ կիտա, կհեծնա Միրզա Մահմուդ։

Թուշար կրսե.—Դու քարվընի էտև կիցի, ես առեջ կընկնամ։

Կէրթան հըր կեսօրին, Միրզա Մահմուդի ուժից ուրին աբկի ձին կսատկի։

Իրեք օր ճամփա կէրթան, իրեք ձի կսատկըցու։ Կմոտենան Բաղդատու, կիտա իրեք հարիր օսկի, կառնե մեկ բոզ ձիմ՝։

Միրզա Մահմուդ կհեծնա ու կէրթա։

Կհասնին Բաղդատու խեշ, Թուշար կրսե.—Միրզա Մահմուդ, դու կիցի բեռներու խեշ, ես կէրթամ առեջ, խան գտնամ, ավլիմ, հորթիմ, հըր դու իգեք։

Թուշար կէրթա, խան կգտնա, կավլե, հորթե, էդոնք հ՝ետևեն կիգան։

Թուշար զբեռնին կիջուն, կտեղադրին։

Միրզա Մահմուդ կիշկե օր Թուշար ընկե ուր բեռներու հետ, ուրին տիրութեն չէնի։

Միրզա Մահմուդ կրսե.—Ջանը՛մ, էդի կէրևա օր տղի ծուռ չէ, մալի ծուռ է։

Կայնի, կայնի հըրի գիշերվան սահաթ էրկուսին, Միրզա Մահմուդ կէրթա կհարցու, զԹուշրի դուռ կգտնա, կզարկի զդուռ, կնիկն ու ախչիկ կելան դուս։ Միրզա Մահմուդ հըմալ խորոտիկ կէղնի օր ախչիկ տեսնալուն պես, խելքը կընցու։

Միրզա Մահմուդ կրսե.—Իգին կա՞ իգամ ներս։

Կրսե.—Իգին կա, ամլյաթ չկա։

Կկանի սահաթըմ հոդտեխ, կիշկե օր Թուշար չէկավ, կթողե կէրթա։

Կրսե թե.—Իմ ձին հ՝ուր կայնավ, հ՝ոնի կիշնամ։

Ձին կէրթա, ինքն ալ վրա, ձին կէրթա դուռն դեմ մի ու կկանի։ Կիշնա ձիու վրավեն, կքաշե ձին ներս։ Կիշքե օր եուսունին ձի կապուկ է, տեխրմ պարապ է։ Ձին կկապե ընտեխ, կլնա գարին առեջ, կէլնա վիրի դին։ Կիշքե օր եուսունին ջրհել տղա նստուկ ին,

տեխըմ պարապ է, ինք լէ կէլլա էն պարապ տեխ կնստի։ Ընկերներ կիգան թոխա կէնին հետ։

Կըսին.—Ախպե՛ր, մենք եռսուն և ին հոգի ամեկ էրկրիցմ՝ ինք, էղինք իրարու ախպեր, ախպերըմ մզի պակաս էր, գու լէ մզի հետ, կէղինք քառսուն ախպեր։

Էրկ օր, իրեք օր ըդտեխ կնստին, կուտին, կխմին ուլանց փանջարի դիմաց խալարալըզ մի կփրցնա, մարդիկ կէրթան ու կիգան։

Միրզա Մահմուդ կհարցու.—Ախպըրտա՛նք, էդ ի՞նչ խալաբալըզ է։

Կըսե.—Բըլեթ, փուսուլա առնողնին ին։

Կըսե.—Ի՞նչ բըլեթ է։

Կըսե.—Դու չըսի՞ս, թագավորին ախչիկըմ կա հ՝ոդա, շատ խորոտիկ է, հինգ-հինգ օսկի կիտան, կէրթան իշին զթագավորի ախչըկա մեկ ճկութ։

Կըսե.—Օր հըմա՛լ է, էլե՛ք էրթանք, իշինք մեք լէ զէդ ախչիկ։

Ընկերտանք ըսին.—Ախպե՛ր, հ՝ո՞ւատ էդ խըդար փարա օր մենք իտանք, իշինք զըդ ախչիկ։

Կըսե.—Ջանը՛մ, էլեք էրթանք, աստված օգորմած է, իշալլահ, փարա լէ չէղնի, կիշինք զըդ ախչիկ։

Կէլնան, ինք առեջ կինկնա ու կիգան։

Թագավորի ախչիկ, թե հըրի զճկութ մինակ կցուցուր, օր Միրզա Մահմուդ կտեսնա, դուռ կէլնա, հ՝ըմեն մարդ կիշին զէդի, առանց փուսուլի, առանց բըլեթի։ Հըմալ կէղնի օր պզտիկ ճըժերն լէ անկըշկըլա կիտան իրարու, թե թագավորի ախչիկ իլե դուռ, հ՝ըմեն մարդ կէրթա առանց փարի կիշե ու կիգա։

Ըդ ախչիկա սիրտ կկպի Միրզա Մահմուդ։ Կհարցու, փորձի, կըսե.—Էդի վի՞ր տղեն է։

Կըսին.—Ֆլան թուջրի տղեն է։

Կէլլա յոթ շալակ օսկի կճամփե թուջրին։

Կըսե.—Ջքու տղեն օղորկե թըխ իգա իմ խեչ։

Թուջար կէլլա օլորդի, էրթա զուր տղեն գտնա ըտտեխ, եռսուն ին ախպոր մեջ։

Կըսե.—Ախպըրտանք, ոըջա կէնիմ, օր զիմ տղեն հանձնեք ընձի, տանիմ էրթամ։

Շատ աստծու սուր ու թուր կզարկե, կէլնան Միրզա Մահմուդ կիտան թուջրին։ Թուջար կբերե զՄիրզա Մահմուդ ուր տուն։

Կըսե.—Միրզա Մահմուդ, ըդ էղավ քանի հաղ թագավորի ախչիկ կճամփե յոթ բեռ փարա, զքզի կուղե, կէրթան, չըս էրթա։

Կըսե.—Դու դինաս, ես կէրթամ։

Կէլլա ու կէրթա։ Կէրթա թագավորի ախչկա խեչ, կմթնա իրեք օր։ Օր մը լէ կիշե օր խալաբալաղըմ կփրցնա ըդ քաղքի մեջ։

Ախչկա անուն Խարաջ կէղնի։

Կըսե.—Խարաջ, ըդ ի՞նչ խալաբալըղ է իդա քաղքի մեջ։

Կըսե.—Քու ինչո՞ւ պետքն է։ Կրակ ընկնա քաղքի մեջ վառի, քըզի չոփըմ խոտ չվառի։

Չորս-հինգ օր էղավա խալաբալըղ կէղնի քաղքի մեջ։

Խարաջ կընցնա ուրիշ հ՚օդեմ՚ վըլացվելու հ՚ապով, Խարաջի խըզմըթքար ներս կմտնա Միրզա Մահմուդի խեչ։

Միրզա Մահմուդ կհարցնա.—Քևանի, ըդ ի՞նչ խալաբալըղ է ըդ քաղքի մեջ։

— Ըպա դու չըսիս, թագավորի արաբ դուլաշչին էկի հ՚ոդի տեխ, գուլաշ կուղե։ Մըկա լէ մարդ չկա օր էղոր դեմ գուլաշ կպի։

Խարաջ մեկէլ հ՚օդից կիգա ներս, կքֆրե ղբեսլամեն, կըսե.—Դու հ՚ո՞րի ըսեցիր Միրզա Մահմուդին։

Կըսե.—Միրզա Մահմո՛ւդ, ես կնիկ մարդ չիմ, ես էրիկ մարդ իմ, ես էդա ավաբամ՚ պետք է հասկնամ։ Ամոթ է ընձի օր գուլաշչին էկի հ՚ոդի տեխ ու չէլլամ էրթամ հետ ջրրբվիմ։

Կէլլա ու կէրթա։ Կիշե օր արաբ հագե սխթիան հալավ։ Կէրթա ու կիգա մեյդան։ Ու կըսե.—Ցա՛ն մաշ, յա՛ն գուլաշ*։

Միրզա Մահմուդ կմոտենա ըդոր, ըդի կհլոնտե գՄիրզա Մահմուդ, օր կհլոնտե, Միրզա Մահմուդի օտվի սոլ կէլնա օտնից։

Ըդ Միրզա Մահմուդ կգճի սոլ վերու, արաբ կդառնա վերա։ Միրզա Մահմուդ գրճկուկ տեխեն կվերու զարար ու կէլնա։ Կզարկե ձեռով արաբու մեկ կողեկ, ընդիից գէլնա գուա։ Արաբ կմեռնի։ Արաբի մարդիկ վերուն զարարի ջանդակ ու տարան էրթան ուրանց թագավորի խեչ։ Թագավոր կտեսնա ուր գուլաշչու շանդակ, կէլլա գիր մի կգրե, Խարաջի պապուն, կըսե. «Քու քաղքի մեջ հըմլա մարդմ՚ էղի, զիմ գուլաշչին ըսպանե, յա՛ն զընի ճամփես իդա, յա՛ն քու պատրաստութեն տես, կըռիվ կիգամ քու վրեն»։

Խարաջի պապուն ըդխըդար ուժ չկա ուրին, կվախենա ըդ թագավորից, կանչե գՄիրզա Մահմուդ։ Կըսե.—Միրզա Մահմուդ,

---

* կամ՚ հնազանդություն, կամ՚ ըմբշամարտ (Ծ. Կ.)։

Ֆլան թագավոր զքզի է կանչե, օր չէրթաս, կէլլա մըր վրա կռիվ, քաղաք քաղքով կկոտորե։

Կըսե.—Կէրթամ։

Խարաշն կէլլա գիրըմ կգրե, կդնե գողտուկ Միրզա Մահմուդի սաքուի ջեր։ Միրզա Մահմուդ կէլլա ու կէրթա ըն թագավորի մոտ։ Թագավոր տանե զըդ մարդ ուր հըղուր կիշե օր շատ խորոտիկ ջրհել տղեմ՝ է ուր հ՝օդի խեչ հ՝օդեմ՝ կիտա ըդոր։

Քաղաք քաղքով կլսին, թե հ՝ըմլա խորոտիկ երիտասարդմ՝ էկի թագավորի խեչ, հ՝ըմեն մարդ կթափի ու կէրթա զՄիրզա Մահմուդ սեյր կէնի։

Ուռեսուն օր կմնա ըդտեխ, օրմ՝ լէ ըդտեխու խոջեն կըսե.— Ջանը՛մ, ես լէ էլնամ էրթամ ըդ մարդ սեյր էնիմ։

Իրեք օր վըր իրարու կէլլա կիգա սեյր պըտի էնա, դոր չկա։ Գիշեր կպառկի խոջեն, լուսուն դեմ կէլլա։

Կըսե.—Իդա գահ օր չէրթամ սեյր էնիմ, էլ ընձի դոր չընկնա։

Կէլլա իդա Միրզա Մահմուդի դռան վրան կմտնա ներս, կիջե օր Միրզա Մահմուդ աղոթք է կընե։ Նեմեժ կընե փրցնա, կվերու. սաքուն կթոթվե, պզտի փուսուլեմ կպատի ջերից։

Միրզա Մահմուդ ալմադար չէր օր ըդ փուսուլեն ուր ջերն էր։ Միրզա Մահմուդ կարդալ չըր գինե։ Ըդ փուսուլեն վերուց, տվեց խոջին, ըսեց.—Առա՛, կարդա, իշի՛, տես ի՞նչ կա փուսուլի մեջ։

Խոջեն առավ կարդաց, իշից՝ գրուկ էր մեջ, քառսուն օր զքու. ճամփեն կիշիմ, էկար կհասնիս ընձի, չէկար՝ զաթի չըս հասնիս, զի կտանին։

Միրզա Մահմուդ օր լսեց ղրդ խըսեն, խելք հ՝ընցավ ու պա- տավ գետին։ Խոջեն հոդ էր, գնաց վրա ու Միրզա Մահմուդի գլուխ շըփեց ու սիրտ չփեց, ախլավ Միրզա Մահմուդ վրա։

Խոջեն դուռ ու դուրս փախավ։

Միրզա Մահմուդ մտածեց էրկու իրեք սահաթ, հըր թագավոր քնուց էլավ։ Հ՝ըմեն օր թագավոր Միրզա Մահմուդի հետ հաց կու- տեր, գինե էլ ավուր պես կանչեց զՄահմուդ, էկու հաց ուտինք։

Միրզա Մահմուդ էկավ, թագավոր տեսավ զՄիրզա Մահմուդի ոանկ ավրեր է։

Ըսեց.—Միրզա Մահմո՛ւդ, ըդ ի՞նչ է խոմի քզի։

Ըսեց.—Քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, հալ ու քեֆյաթ իդա թուղթն է, իդա փուսուլեն է։

Կհանե զէդ փուսուլեն, կիտա թագավորի մոտ, թագավոր

կկարդա Խարաշի գրած. «Քառսուն օր էկար՝ կհասնիս ընձի, չիգաս՝ չըս հասնի, ընձի կտանին էրկան»։

Թագավոր Միրզա Մահմուդի գալու օրնէ հըր ըդ օր կհաշվե, մանցեր ա վեց օր, օր քառսուն օր թըմի։

Կհարցու թագավոր, կըսե.—Պըտի էրթա՞ս։

Կըսե.—Թագավոր ապրածդ իմ, եթե իգին իտաս, կէրթամ։

Թագավոր կէլլա թարուրըմ զորք կդնե հետ ու իրեք-չորս հատալ զաբութ, թամբի կէնե զաբութին ու զորքերուն.—Ըդա մարդ կտանեք հըրի ուր տեխն ու կդառնաք։

Միրզա Մահմուդ կիշե օր ըդոք ուր հետ էզնին, չհասնի, զէդոք ետ կդարցու։ Ըդ քաղքից հըրի թուշրի քաղաք տասն ավուր ճամբա հեռու կէղնի իրարուց։ Ինք մինակ կհեծնա ու կքշե իգա։ Կիգա թուշրի տուն, կնստի խավեմ՝ կբերին, կխմե։

Թուշրի կնիկ կըսե.—Միրզա Մահմուդ, չըսե՞ս Աջմու շահ էկավ, զքու Խարաշ ուզեց տարավ ուր տղին։ Ըս օր իրեք օր լէ տարի է գացի, առեր տարեր են։

Միրզա Մահմուդ խավեն թամամ չխմեց, կես մնաց, հեծավ զուր ձին ու էտեղեն գնաց։ Վախտից վախտ գնաց, Խարաշի հետի բեսլամեն դուրբին դրեց աչվընուն, իշեց օր ձիավորըմ դուման էրե էտեղեն ու կիգա։

Ըսեց Խարաշին.—Խարա՛շ, ըդա ձիավոր կմնի Միրզա Մահմուդ։

Կըսե.—Քու վիզ կոտրի, էսա հինգ տասն օր Միրզա Մահմուդ մոռցեր էի, գինա՞ էձգեցիր իմ միտք։

Ըսեց.—Տուր զդուրբին, ես լէ իշիմ։

Իշեց օր հախիխաթ Միրզա Մահմուդն է։ Աջմու շահ հինգ հազար ձիավոր էր հետ, որ էկավ զԽարաշ տարավ։ Միրզա Մահմուդ էկավ հասավ հինգ հազար ձիավորին, քշեց ձիավորներու առջև, հ'ետևու առավ։

Աջմու շահ շատ մտածեց, ըսեց.—Իգա մարդ օր էկավ ձիավորներու առեջն առավ, ըդոր տակ բա մը կա։ Եթե ես տընիմ ըդ մարդու հետ, ըդ մարդ մզի ուրսվա պըտի ընե ու զհարս լէ չընք կոնա մըք տանի։

Աջմու շահ մոտեցավ Միրզա Մահմուդին, ըսեց թե.—Քու ըսածն ի՞նչ է. ի՞նչ կըսես։ Փարա կո՞ւզիս, իտամ քզի փարա։

Ըսեց.—Փարե՞ն ինչ էնիմ, էդի իմ հախլուն է, կտանիս։

Ըսեց.—Հըմա՛լ է, չադր զարկեք կինաք հ՚ոդա, ճամբիմ զիմ տղեն լէ թըզ իդա հ՚ոդա։

Կէլլա հինգ ձիավոր կճամբե ուր տզի էտև, ինք լէ չադր կզարկի, կմնա հ՚ոդի։

Իրեք օր հ՚ոդ կմնա Աշմու շահ ուր ասքրով, հըր տղեն կիգա։

Աշմու շահ կառնե զտղեն, կիգա Միրզա Մահմուդի խեչ։

Կըսե.—Ամոթ է, ըդքան ձիավորով իդա մարդուն հետ կռվինք, իդոր օրենքն իդա է, ես կառնիմ զիմ ձիավորներ, կէրթամ։ Դուք էրկուս կռվեք, որ մեկ օր հաղթեց, խարաշ թըզ էղնի էդոր։

Աշմու շահ էկավ դեպի ուր քաղաք։ Միրզա Մահմուդ, Աշմու շահու տղեն ու խարաշն ու բեսլամեն մանցին ընտեխ։ Առավոտուն էլան, Միրզա Մահմուդ ըսեց ըն տղին։

— Ձիո՞վ կռվինք, թե պահյա։

Ըսեց.—Դու դինաս, իմա՞լ կուզես, էնավա ընինք։

Կըսե.—Ինչո՞վ կռվինք, մըզրըխո՞վ կռվինք։

Էլան կռվան, հըրի իրիկուն կռվան, զարկեցին զարկվան, մըզրըխնին կոտրավ, մնաց կոթ մինակ։

Մըթնավ։ Էկան նստան իրարու խեչ։ Խարաշի բեսլամեն խավա էփեց։ Մեկ ընդոր տարավ, մեկ ընդոր տարավ։ Պառկան քնան հըր առտուն։ Առտուն էլան։

Միրզա Մահմուդ ըսեց.—Աղա՛, ըսօր ինչո՞վ կռվինք։

Շահի տղեն ըսեց.—Ըսօր թրով կռվինք։

Ըսեց.—Դու գինաս։

Էլան ու կռվան։ Առտըվնե հըր իրիկուն։ Տարան զիրար ու բերեցին, կռվան, ջարթեցին զթրեր, մնաց թրի բալչըխ ուրանց ձեռք։

Իրկուն մթնավ, էկան իրարու խեչ, հաղ մը լէ։ Խավա էփեց Խարաշի բեսլամեն, կերակուր տվեց։ Կերան, պառկան, քնան հար առավոտ։ Առտուն էլան, շահի տղեն ըսեց.

— Միրզա Մահմուդ, իդա էրկ օր· ես ու դու ախպոր պես իք կռվի։ Ըսօր յա՛ն աստված ընձի կիտա, յա՛ն քզի։

Ըսեց.—Շատ աղեկ, կընդունիմ։ Ի՞նչ է քու ըսած։

Ըսեց.—Ըսօր գուլաշ կպինք ես ու դու։ Որ ըզվոր դրեց գետի՛ն, ղաթի Խարաշ կէղնի ընդոր։

Էլան ու փաթվան իրար։ Զորս հինգ սահաթու չափ, տարան զիրար ու բերեցին։ Շահի տղի խուվաթ շատ էր վըր Միրզա Մահմուդին։

Միրզա Մահմուդ մտածեց, ըսեց.—Հե՛յ վախ, խարաջ իդա առավ իմ մոտեն, երանի թե, անգամ լէ իմ աչք քիսնէր խարաջ, աստված իմ հոգին թըխ առներ։ Ըսեց ու զաչք դարձուց դուր խարաջ։ Կարծես թե աստուծմե ըդոր ուժ էկավ, ուռավ հաստցավ, վերուց շահի տղեն, դրեց գետին։

Շահի տղեն տակ մնաց, ըսեց.—Ախպե՛ր, քու իրավունքն է, օր գու գիս մորթես։

Ըսեց.—Ես բերախդ մարդ չեմ, կտրիճ մարդուն չըմ մորթի։

Էլավ բռնեց ղընդուր ձեռք, կանգըցուց։

Միրզա Մահմուդ ըսեց.—Դու իմ պզտի ախպերն, ես քու՝ մեծ ախպեր։

Շահի տղեն խարուլ էրաց։ Առան գիրար ու էկան։ Էկան ետ, թուշրի տուն։

Միրզա Մահմուդ ըսեց.—Ընձի քուրմ՝ ալ կա։ Էկուր, էրթանք մըր տուն։

Էկան թուշրի տուն։ Լավ ձեռքըմ՝ շոր հագցուց ուր քրոջ, թուշրի ախչըկան։ Ցուց տվեց շահի տղին, ըսեց.—Ախպե՛ր, իստակ սրտով, կուզես գիդա ա՞ռ, գուզիս՝ խարաշն առ։

Ըսեց.—Չէ՛, ավ կի խոտ է, չըկըրեմըրով վե նալը*։

Թուշրի ախչիկ տվեց շահի տղին։ Էն լէ առավ զխարաջ։

Ցոթն օր գիշեր-ցերեկ էնտեխ հարսնիք դրին, էրկուսն էլ պսակվան։ Էլավ Միրզա Մահմուդ շահի տղին ճամփու դրեց ու ետ դարձավ։

---

* Այն որ աստված կշինե, մարդ չի կրնար քակել (Ծ. Բ.)։